ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.12.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<Ջինջ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից վերջինիս և <<Ջինջ>> ՍՊԸ-ի միջև 26.09.2022 թվականին կնքված թիվ <<ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/05>> ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

Հայցադիմումը մուտքագրվել է 08.12.2023 թվականին և կազմվել թիվ ԵԴ2/42434/02/23 քաղաքացիական գործը:

Քաղաքացիական գործը դատավորի աշխատակազմին հանձնվել է 11.12.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից պայմանագրի միակողմանի լուծումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա՝ ելնելով հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից պետք է պահանջել <<ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/05>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<Ջինջ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել <<ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/05>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Պայմանագրի միակողմանի լուծումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ԵՐԻՑՅԱՆ**